



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> ՕԳՈՍՏՈՍ 2019 թվականի N 42

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետի պահանջներով

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել համայնքի ավագանու նիստի օրակարգը.

1. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ՀՈՂՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/Հարցը ներկայացնում է՝ ֆինտևտ և զանձումների բաժնի պետ Հ. Պողոսյանը/

2. ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Հարցը ներկայացնում է՝ աշխատակազմի գլխ. մասնագետ Հ. Դավթյանը/

ԿՈՂՄ (8)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈՒԲՅԱՆ

2. ԱԼԵԲՄԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

3. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ

4. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5. ԱՐՄԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ

6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ

8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍԱՄՅԱՆ

res



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

[Handwritten signature]

ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> ՕԳՈՍՏՈՍ 2019 թվականի N 43-Ն

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019Թ. ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍԻ ՀՈԴՎԱԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Նկատի ունենալով «Արարատ քաղաքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի շենքում մեծահասակների ժամանցի համար նախատեսված սենյակի հատակի հիմնովին վերանորոգման, ինչպես նաև ասֆալտապատման երկրորդ փուլի աշխատանքների նախագծերի լրացուցիչ ֆինանսավորման անհրաժեշտությունը և ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ու 8-րդ ենթակետերի պահանջներով, ինչպես նաև համայնքի ավագանու կանոնակարգով

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Պակասեցնել 1112.51 «Համայնքի պահուստային ֆոնդեր» ծրագրի 4891 «Պահուստային ֆոնդեր» հոդվածը 1000,0 հազ.դրամով և սահմանել համայնքի պահուստային ֆոնդը 3607,2 հազ. դրամ:
2. Պակասեցնել 0451.51 «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի 5113 «Շենք շինությունների կապիտալ վերանորոգում» հոդվածը 500,0 հազ. դրամ; Սահմանել վերջինիս ծախսային պլանը 40164,972.2 հազ. դրամ:
3. Ավելացնել 0823.51 «Մշակութային տներ և ակումբներ» ծրագրի 4639 «Այլ դրամաշնորհներ» հոդվածը 1000,0 հազ. դրամով և սահմանել վերջինիս ծախսային և ծրագրային պլանը 28417,0 հազ. դրամ:
Նույն թվում՝ ավելացնել «Արարատ քաղաքի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ի պայմանագրային դրամաշնորհի գումարը 1000,0 հազ. դրամով և սահմանել այն 28417,0 հազ. դրամ:
4. Ավելացնել 0451.51 «Ճանապարհային տրանսպորտ» ծրագրի 5134 «Նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում» հոդվածը 500,0 հազ. դրամ: Սահմանել վերջինիս ծախսային պլանը 2000,0 հազ. դրամ
5. Համայնքի ղեկավարին՝ կազմել նոր նախահաշիվներ և ժամանակացույցեր

ԿՈՂՄ (7)

ավագանու անդամներ՝

1. ԱԶԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ

2. ԱՆԴՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ

3. ԱՆԴՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

4. ԱՐՄԵՆ ՀԱԿՈՒԹՅԱՆ

5. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ

6. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆԴԱՐՅԱՆ


7. ՌՈՍԱ ԱՌՈՒՍՏԱՍՅԱՆ

[Handwritten signatures on lines]

ԴԵՄ (1)

ԱԼԵԿՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ

[Handwritten signature]



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒՄ ԶԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատի քաղաքային համայնք,
ք. Արարատ, Շահումյան 34, հեռ. /0238/4-47-47, էլ. փոստ՝ ararat.ararat@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

<<13>> ՕԳՈՍՏՈՍ 2019 թվականի N 44

ԱՐԱՐԱՏ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀՍՏԱԿԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՆԱԽԱԳԻԾ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ և 97-րդ հոդվածով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14³-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ սահմանված կարգը և Հայաստանի Հանրապետության վարչապետի 22.12.2009թ. N 1064-Ա որոշմամբ հաստատված ստեղծված միջգերատեսչական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի ռաջարկությունը՝ Արարատ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագիծը հաստատելու, հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին.

ԱՐԱՐԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արարատ քաղաքային համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություններ կատարելու նախագիծը :

1. Արարատ քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող, «ԱՐՄԻԼԻՑԻՈՒՄ» ՍՊԸ-ի սեփականությունը հանդիսացող 10,0 հա (կադաստրային ծածկագիր 03-002-0131-0107) հողամասից 7,0 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության արոտավայր հողատեսքը (հողամասը) փոխել և դարձնել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, արդյունաբերական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս՝ համաձայն կից հատակագծի:
2. Գլխավոր հատակագծում կատարվող փոփոխությունը և դրանով սահմանված հողամասի նպատակային և գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14³-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջի ապահովման պայմանով:
3. Ճյուղային և համանքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումներին՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14³-րդ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան հողամասի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:
4. Համայնքի ղեկավարին՝ առաջարկել «ԱՐՄԻԼԻՑԻՈՒՄ» ՍՊԸ-ին համայնքի բյուջեի համապատասխան հաշվին վճարել նպատակային նշանակությունը փոփոխվող հողամասի

կադաստրային արժեքների տարբերությունը, որը կազմում է 86 537 500 (ութսունվեց միլիոն հինգ հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) ՀՀ դրամ:


5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման՝ օրենքով սահմանված կարգով:

ԿՈՂՄ (8)


1. ԱԶԱՏ ՀԱԿՈՒԲՅԱՆ




2. ԱԼԷՔՍԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ



3. ԱՆՂՐԱՆԻԿ ՓԱՆՈՍՅԱՆ




4. ԱՆՂՐԵՅ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ




5. ԱՐՄԵՆ ՀԱԿՈՒԲՅԱՆ



6. ԶԻՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ



7. ԿԱՐԵՆ ԻՍԿԱՆՂԱՐՅԱՆ



8. ՌՈՄԱ ԱՌՈՒՍՏԱՍՅԱՆ



ՀԱՄԱՅՆՔԻ ԼԵԳԱԼԻՅԱՆ ՀԱՅԿ ՀԱՅԿՅԱՆ

